ՄԱՐԻԱՄ ԽԱՆԶԱԴՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԶԱԲԵԼ ԹԱԳՈՒՀՈՒ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ[1]

Սույն հոդվածի նյութն ըստ էության նորույթ չէ, այլ պատմական տեղեկություններն ի մի բերելու: Խոսքը գնում է Կիլիկիայի թագուհի Զաբելի մայրական գծով ծագումնաբանության մասին: Մեր գրականության մեջ սովորաբար նշվում է միայն Զաբելի մոր՝ Կիպրոսի արքայական տան ներկայացուցչուհի Սիբիլ Լուսինյանի անունը, սակայն Զաբելի մայրական գծով նախնիների ծագումնաբանական շարքերում կան հետաքրքիր փաստեր, որոնց հանրագումարով Զաբելի մայրական կողմում աչքի են ընկնում մի կողմից՝ հայ-բյուզանդական, մյուս կողմից՝ հայ-ֆրանսիական[2] շարքերը՝ հայկական կոմպոնենտի ակնհայտ գերակայությամբ:

Շարադրանքը բաղկացած է 4 մասից.

Մաս Ա. Տարոնիտիսներ:

Բյուզանդիայի հայ նախարարական տոհմերից երևի թե ամենազդեցիկն ու հայտնին Տարոնիտիսների տոհմն էր, որը սերում էր 966 թվականին Բյուզանդիա տեղափոխված Աշոտ Բագրատունուց: Տարոնիտիսները մեծ դերակատարություն ունեցան Բյուզանդիայի քաղաքական կյանքում, ինչին մանրամասն անդրադարձել են Ն.Ադոնցը և Կաժդանը[3]:

---

[1] Այս հոդվածի անգլերեն տարբերակը լույս է տեսել «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսում 2018 թվականին (տե՛ս http://www.fundamentalarmenology.am/issues/15/ISSUE-2-(8)-2018.html): Հայերեն հրապարակում ենք հայ ընթերցողին առավել հասանելի դարձնելու համար:

[2] Լիբանանի հայ արքայադստերերի մասին տե՛ս Mutafian C., Les princesses Arméniennes et le Liban latin (XIIe – XIIIe siècle), in Les Arméniens du Liban: Des Princesses et des Réfugiés du Passé à la Communauté Contemporaine, Beirut, 2009, p. 3-30.

[3] Տե՛ս Ադոնց Ն., Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում, Երկեր, հ. V, Երևան, 2012, էջ 260-324, նույնի՝ Դիտարկումներ Տարոնացիների

Աննա Դալասինայի[4] և բյուզանդական ազնվական Հովհաննես Կոմնենոսի (ապագա կայսր Ալեքսիոս I Կոմնենոսի հայրը) ամուսնությունից ծնված հինգ երեխաներից Մարիան ամուսնանում է Միքայել Տարոնիտիսի[5] հետ: Բյուզանդական աղբյուրները նշում են Տարոնիտիսների տոհմից մի օրիորդի, որը ենթադրաբար եղել է կամ Միքայելի որդի Հովհաննեսի դուստրը կամ Միքայելի որդի Գրիգորի դուստրը: Նա ամուսնացել է Մանուել I Կոմնենոսի եղբորորդի Հովհաննես Կոմնենոսի՝ Կիպրոսի դուքսի հետ[6]: Կոմնենոսի հարսնացուին XII դարի բանաստեղծ Թեոդորոս Պրոդրոսն անվանում է «եփրատյան ճյուղ» և «Տարոնիտիսների փառք»: Կաժդանը ենթադրում է, որ նա կարող էր պատկանել ոչ թե կոստնադնուպոլսյան Տարոնիտիսներին, այլ նրանց՝ Եփրատի մերձակայքում տիրույթներ ունեցող ճյուղին[7]: Մենք չգիտենք նրա անունը, հայտնի է միայն, որ ամուսնու մահից հետո նա միանձնուհի է դարձել՝ Մարիա անունը վերցնելով[8]:

Հովհաննես Կոմնենոսն ու Տարոնիտիսների տոհմին պատկանող այս օրիորդը ունեցել են երեք դուստր՝ Մարիա, Եվդոքսիա և

տոհմաբանության վերաբերյալ, Երկեր, հ. V, էջ 325-331, Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 17-24.

[4] Հնարավոր հայկական ծագմամբ, քննարկումն ու գրականությունը տե՛ս Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 92-97:

[5] Ադոնց Ն., Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում, Երկեր, հ. V, Երևան, 2012, էջ 303:

[6] «Taronitissa, daughter of [IOANNES] Taronites [III] & his wife --- ([1125/30]-after 1176)... According to Rüdt-Collenberg, she was the daughter or granddaughter either of Ioannes Taronites [I] or of his brother Gregorios (sons of Mikhael Taronites)», Foundation for Medieval Genealogy, Byzantium 1057-1204, Chapter 1, Komnenos, online
http://fmg.ac/Projects/MedLands/BYZANTIUM%2010571204.htm#MariaKdied1217

[7] Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 54.

[8] Foundation for Medieval Genealogy, Byzantium 1057-1204, Chapter 1, Komnenos, online,
http://fmg.ac/Projects/MedLands/BYZANTIUM%2010571204.htm#MariaKdied1217

Թեոդորա անուններով, որոնցից Մարիան 1167 թվականին ամուսնանում է Երուսաղեմի արքա Ամորի I-ի հետ:

Մաս Բ. Երուսաղեմի արքայատուն

Երուսաղեմի թագավոր Բոդուէն II-ը 1101 թ. ամուսնանում է Մալաթիայի հայ սեբաստ Գաբրիելի դուստր Մորփիայի[9] հետ: Մորփիան Բոդուէնին չորս դուստր պարգևեց: Հետաքրքիր է, որ Բոդուէնին առաջարկել են Մորփիայից բաժանվել և նոր կին առնել՝ արու զավակ ունենալու համար, սակայն ըստ պատմիչների, Բոդուենն այնչափ մեծ սեր էր տածում Մորփիայի հանդեպ, որ կտրականապես հրաժարվել է: Մորփիան թագադրվեց որպես Երուսաղեմի թագուհի 1120 թվականին: Քաղաքական գործերին չէր խառնվում, հետաքրքրությունների շրջանակը կարծես թե սահմանապակված էր պալատով և դուստրերի դաստիարակությամբ: Բայց երբ ամուսինը 1123 թվականին գերի ընկավ, Մորփիան վճռական գոծողությունների դիմեց. նախ նա հայ վարձկան զինվորների խումբ ուղարկեց պարզելու թե որտեղ է պահվում ամուսինը, այնուհետև անձամբ գլխավորեց բանակցությունները, և, ի վերջո, Բուդուենն ու մնացած գերիները ազատվեցին 50 հայ զինվորների շնորհիվ, որոնք առևտրականների հագուստներ հագած թափանցեցին բերդ, սպանեցին պահապաններին և ազատագրեցին բանտարկյալներին[10]:

Մորփիան մահացավ 1126 կամ 1127 թվականի հոկտեմբերի 1-ին, և նրա աճյունն ամփոփվեց Երուսաղեմից ոչ հեռու գտնվող Սուրբ Մարիամի աբբայությունում, որտեղ ըստ ավանդության գտնվել է Տիրամոր գերեզմանը:

Ցավոք, ո՛չ Մորփիային, ո՛չ Արդային (Երուսաղեմի թագավորության առաջին թագուհին, որը հայկական ծագում ուներ[11]) հայ պատմիչները չեն հիշատակում նրանց՝ քաղկեդոնական դավանանքին պատկանելու համար[12]

---

[9] Mutafian C., L'Arménie du Levant (XIe-XIVe siècle). Vol. I, Paris, 2012, p. 374-375.

[10] Նույն տեղում, էջ 375:

[11] Mutafian C., Les princesses arméniennes…, p. 5.

[12] Նույն տեղում, էջ 6:

Բուդուենը չամուսնացավ Մորփիայի մահից հետո և որոշեց իր ժառանգորդուհի հայտարարել ավագ դստերը՝ Մելիսենդային: Մինչ հոր մահը Մելիսենդան հանդես է գալիս որպես հոր համակառավարիչ: Մելիսենդայի ամուսնու ընտրության հարցում Բուդուենը խորհուրդ հարցրեց Լուի VI-ից, որն էլ առաջարկեց Ֆրանսիայի ազդեցիկ ազնվականներից մեկին՝ Ֆալկ Անժուացուն: Ֆալկից Մելիսենդան երկու որդիներ ունեցավ՝ Բոդուեն III-ը և Ամորի I-ը: 1163 թվականին Երուսաղեմում գահ բարձրացավ Ամորի I-ը (ժառանգ չունեցող եղբոր մահից հետո): Նա կամուսնանա երկու անգամ. առաջին անգամ Ագնես դե Կուրտենեի հետ, որից կծնվեն Բոդուեն IV-ը և Սիբիլը, և երկրորդ անգամ ***Մարիա Կոմնինայի*** հետ, որից կծնվի ***Իզաբելը:***

Մաս Գ. Լուսինյաններ

Լուսինյաններն Արևմտյան Ֆրանսիայի ազնվական տոհմերից էին, Աքվիտանիայի դուքսերի վասալները: Այս տոհմի ներկայացուցիչները բազմիցս մասնակցել են խաչակրաց արշավանքներին և սերտ կապեր հաստատել արևելքի խաչակրաց պետությունների ազնվականության հետ: Հավանաբար, դա էր պատճառը, որ Ամորի Լուսինյանը, որը մասնակցել էր Անգլիայի թագավոր Հենրի II դեմ ուղղված ապստամությանը, ստիպված էր փախուստի դիմել և դեգերումների արդյունքում գալ հասնել Երուսաղեմի թագավորություն: Երուսաղեմում նա արեց հնարավոր ամեն ինչ, որպեսզի իր եղբայր Գի դե Լուսինյանն ամուսնանա Երուսաղեմի թագավորության գահաժառանգորդուհու՝ Սիբիլի (վերոհիշյալ Ամորի I-ի դուստրը Ագնես դե Կուրտենեից) հետ: Իսկ ինքն ամուսնացավ Սիբիլի խորթ քրոջ և Մարիա Կոմնինայի դստեր՝ Իզաբելի հետ: Ամորի Լուսինյանն (որի 3-րդ ամուսնությունն էր) ու Իզաբելը (4-րդ ամուսնությունն էր) 1198 թվականին ունեցան դուստր, ***Սիբիլ*** անունով: Այդ նույն տարի Տարսոնում Լևոն Բ իշխանը հռչակվեց թագավոր, մինչդեռ Կիպրոսում, Լուսինյանների կալվածքներում մեծանում էր Սիբիլը՝ Լևոնի ապագա կինը:

Մաս Դ. Զաբել[13]

Լևոնի առաջին կինը՝ Իզաբելը, Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ի երրորդ կնոջ՝ Իզաբելի եղբոր դուստրն էր: Ամուսնությունը քաղաքական ենթատեքստ ուներ և պետք է զերծ պահեր Անտիոքի դքսին Կիլիկիայի հայկական իշխանությանը վնասող քայլերից[14]:

Պսակադրությունը տեղի ունեցավ 1189 թվականին: Իզաբելը մի դուստր ունեցավ, որին կոչեցին Ռիտա-Ստեփանիա: Սակայն այս ամուսնությունը տխուր վերջաբան ունեցավ: Մեզ հայտնի չէ պատճառը, գիտենք միայն, որ 1206 թվականին Լևոնը սաստիկ ծեծել է կնոջը և սպանել տվել նրա մերձավորներին[15], ինչից հետո թագուհուն փակել են Վահկա ամրոցում, ուր մեկ տարի անց նա մահացել է:

Իսկ դստերը՝ Ռիտա-Ստեփանիային, ուղարկել են տատիկի՝ տիկին Ռիտայի խնամակալության տակ՝ հետագայում զրկելով նրան գահաժառանգության բոլոր հույսերից: 1209 թվականին Լևոնը, մոր խորհրդով գահաժառանգ է հռչակում իր եղբոր դուստր Ալիսի որդուն՝ Ռուբեն-Ռայմոնդին և մեկ տարի անց ամուսնանում է երկրորդ անգամ, այս անգամ Ամորի Լուսինյանի դստեր՝ Սիբիլի հետ:

Այս ամուսնությունից ծնվեց **Զաբելը**՝ Լևոն Բ-ի երկրորդ դուստրը, որը գահ բարձրացավ 1222 թվականին:

Այսպիսով, եթե ի մի բերելու լինենք Զաբելի ծագումնաբանությունը (տե՛ս կից տոհմածառը), ապա ակնհայտ է, որ մայրական

---

[13] Ռուբենյանների տոհմածառն ամենայն մանրամասնությամբ ներկայացված է հետևյալ աշխատություններում՝ Mutafian C., Les princesses arméniennes…, p. 25, Mutafian C., L'Arménie du Levant ..., Rüdt-Colenberg W.H., The Rupenides, Hethumides and Lusignans; the structure of the Armeno-Cilician dynasties, Lisbonne, 1963.

[14] Սմբատայ սպարապետի տարեգիրք, գլուխ 637,Վենետիկ, 1956, առցանց՝ http://digilib.aua.am/book/333/339/7559/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%AB%D6%80%D6%84

[15] Նույն տեղում, գլուխ 654, առցանց՝ http://digilib.aua.am/book/333/339/7570/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%AB%D6%80%D6%84

կողմի երկու ճյուղերն էլ (և՛ Կոմնենոսների, և՛ Երուսաղեմի արքա-յատան) ըստ էության հայ-բյուզանդական և հայ-ֆրանսիական են: Եթե զումարելու լինենք Լևոնի նախնիներին, հայրական՝ Ռուբեն-յաններին (որոնցից Թորոս Ա-ի մայրը կրկին հայկական ծագմամբ Վարդ Փոկասի թոռնուհին էր[16]) և մայրական՝ Հեթումյաններին, որոնք սերում էր հյուսիսային Արցախից Կիլիկիա տեղափոխված Օշին Գանձակեցուց, ապա Զաբելի նախնյաց մեջ հայկական կոմպոնենտն ակնհայտ գերակայող դիրք է ստանում:

MARIAM KHANZADYAN
(IOS)

ABOUT CERTAIN ASPECTS OF QUEEN ZABELS GENEALOGY

The information in this article, is, actually, not a novelty, but an attempt to bring together other historical data. The paper considers the genealogy of Queen Zabel's maternal lineage. Thus, to summarize Zabel's genealogy (see family tree), it's obvious that the mother line branches of both Komnenos' and the Royal Family of Jerusalem are, actually, Armenian-Byzantine and Armenian-French. If we also count Leo's ancestors, among which wasprince Leo I's mother, Thoros I's wife, and granddaughter of Vard Pokas, also of Armenian origin, and her mother's, Hetumian's, line descended from Oshin of Gandzak, who moved to Artsakh from Northern Cilicia, Armenian component gains an obvious predominant position among Zabel's ancestors.

[16] Rüdt-Colenberg W. H., նշվ. աշխ., էջ 49:

1. ՄԱՐԻԱ ԿՈՄՆԻՆԱՅԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ (ԼԵՎՈՆ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՆՈՋ՝ ՄԻԲԻԼԻ ՏԱՏԻԿԸ)



2. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՐՔԱ ԱՄՈՐԻ Ա-Ի ՏՈՀՄԱԾԱՌԸ



3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳՈՒՀԻ ԶԱԲԵԼԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ



Աննա Դալասինա*	հնարավոր հայկական ծագում
Միքայել Տարոնիտիս	հայկական ծագում
Ալեքսիոս Ա Կոմնենոս	բյուզանդական կայսերական տոհմ
Բոդուեն դե Բուրգ	ֆրանսիական ծագում
+	ամուսնություն
- - -	հնարավոր ազգակցություն